Կարծիք Գ.Հ. Ավետիսյանի «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հանրակրթության հիմնական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման թեմաների շրջանակներում կարևորվում է բառագիտություն բաժինը, որի մի ենթաբաժնի՝ իմաստաբանության ուսումնասիրությունը ենթադրում է սովորողներին բազմիմաստ բառերի վերաբերյալ գիտելիքների և դրանք խոսքում գործածելու կարողությունների հաղորդում, որ կարող է նպաստել նրանց կապակցված խոսքի զարգացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, անձի սոցիալականացման խնդիրների լուծմանը և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրակրթական դպրոցում այդ խնդիրները բավարար լուծում չեն ստանում՝ ծրագրով դրանց հատկացված սուղ ժամաքանակի և 5-9-րդ դասարանների գործող դասագրքերում թեմայի ոչ լիարժեք լուսաբանման պատճառով:

Այս հարցադրումներն առանձին ուսումնասիրության կարիք են զգում, որոնց լուծմանը ձեռնամուխ է եղել հայցորդ Գ.Հ.Ավետիսյանը՝ հետազոտության թեմա ընտրելով «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» աշխատանքը, որն էլ ներկայացրել է իբրև թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մի կողմից՝ վերոնշյալ խնդիրներն ամբողջացնելու կարևորությամբ, մյուս կողմից՝ բազմիմաստ բառերի ուսուցման գործառական և ոճական յուրահակությունների բացահայտմամբ, որոնք կարող են նպաստել սովորողների լեզվամտածողության զարգացմանը, նյութական խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, բայի, մակբայի բազմիմաստության յուրացմանը, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում դրանց կիրառական հմտությունների ձևավորմանը:

Ատենախոսը հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի հարցերը դիտարկել է Խ. Աբովյանի, Ս. Մանդինյանի, Ա. Բահաթրյանի, Ղ. Աղայանի, Հ. Հինդիլյանի, 20-րդ դարի լեզվաբաններ, մանկավարժներ Էդ.Աղայանի, Ա.Ղարիբյանի, Ա.Տեր-Գրիգորյանի, Ս.Գյուլբուդաղյանի, Ջ.Գյուլամիրյանի, Ֆ.Խլղաթյանի և ուրիշների տեսական և մանկավարժական հայացքների համատեքստում:

Ատենախոս Գ.Ավետիսյանն իր հետազոտության ընթացքում մշակել է հիմնական դպրոցում բազմիմաստ բառերի ուսումնասիրման արդյունավետ մեթոդիկա, այն փորձարկել հիմնական դպրոցի միջին դասարաններում և հետազոտության բազա հանդիսացող փորձարարական դպրոցներում (Գյումրու թիվ 7, Աշոցքի և Ախուրյանի թիվ 1 դպրոցներ):

Գ.Ավետիսյանի ատենախոսությունը ներառում է մի կողմից՝ բազմիմաստ գոյականների և բայերի ուսումնասիրման մեթոդական համակարգը, մյուս կողմից՝ այդ խոսքի մասերի հատկանիշների՝ ածականի և մակբայի բազմիմաստության ուսումնասիրումն ու դրա ուսուցման մեթոդական հնարների ու եղանակների համալիրը: Ատենախոսը կիրառել է տարամակարդակ վարժությունների համակարգ, որ փորձարկվել է տարրական և միջին դասարաններում, որոնց արդյունքները արձանագրված են աշխատանքի համապատասխան բաժիններում տրված գծապատկեր-աղյուսակներում:

Ատենախոսն ըստ ամենայնի վերլուծել է փորձարարական աշխատանքի արդյունքները, որոնք հաստատում են ատենախոսության օգտակարության բարձր գործակիցը. այն մեծապես կարող է նպաստել հիմնական դպրոցում բազմիմաստություն թեմայի համակողմանի ուսուցմանը:

Ատենախոսության հաջողվածության գրավականը պայմանավորված է հեղինակի կիրառած մեթոդներով, ինչպես՝ *գիտատեսական, վիճակագրական*, որոնց եղանակների գործադրմամբ՝

1. ուսումնասիրել է հետազոտության խնդիրների վերաբերյալ լեզվաբանական, հոգելեզվաբանական, մանկավարժական և մեթոդական գրականություն,

2. վերլուծել է հիմնական դպրոցի հայոց լեզվի չափորոշիչները, ծրագրերը և դասագրքերը՝ բազմիմաստ բառերի ուսումնասիրման տեսանկյունից,

3. իրականացրել է բազմիմաստ բառերի գործառական և իմաստաբանական հատկանիշների տիպաբանական վերլուծություն,

4. հիմնական դպրոցի միջին օղակում փորձարարական ուսուցմամբ որոշարկել է բազմիմաստ բառերի ուսումնասիրման գործընթացի բաղադրիչները:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ ատենախոսը մշակել և հիմնական դպրոցում ներդրել է բազմիմաստ բառերի ուսուցման սկզբունքների, վարժությունների, առաջադրանքների, ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների

և մանկավարժական պայմանների համալիր և խնդրո նյութի ուսումնասիրման դասերի աշակերտակենտրոն մոդելներ:

Ատենախոս Գ.Ավետիսյանն աշխատանքի *առաջին գլխում* դիտարկում է *բազմիմաստ բառերի ուսումնասիրման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը:* Քննարկվող հարցադրումների շրջանակներում նա մեկնաբանում է բազմիմաստության ուսումնասիրման պատմատեսական նախադրյալները, բազմիմաստության ուսումնասիրման մեթոդիկան տարրական դասարաններում և հիմնական դպրոցում:

Ատենախոսության *երկրորդ գլխում* դիտարկվում են *բազմիմաստ գոյականների ուսումնասիրման խնդիրները:* Այս գլխի համապատասխան ենթագլուխներում ատենախոսը ներկայացնում է *բազմիմաստ գոյականների իմաստային-թեմատիկ խմբերի, վերացական և թանձրացական բազմիմաստ բառերի, խոսքիմասային տարարժեքություն ունեցող բազմիմաստ գոյականների ձևաիմաստային խմբերը և տալիս է նրանց ուսումնասիրման մեթոդիկան, որ հագեցած է տարաբնույթ վարժություններով և առաջադրանքներով:*

Աշխատանքի *երրորդ գլխում* դիտարկվում են *բազմիմաստ բայերի ուսումնասիրման խնդիրները:* Առաջադիր խնդիրների համատեքստում ատենախոսը քննում է *բազմիմաստ բայերի իմաստային-թեմատիկ և ձևաիմաստային խմբերը, բայերի բազմիմաստությունը, փոխաբերությունը, բայական սեռն ու* ներկայացնում *նրանց ուսումնասիրումը:* Որոշ դեպքերում ատենախոսը նախատեսած քերականական նյութը մատուցվում է *ԽԻԿ համակարգով:*

Ատենախոսության *չորրորդ գլխում* քննարկվում են *հատկանշային բազմիմաստ բառերի ուսումնասիրման խնդիրները:* Հատկանշային խոսքի մասերը տրվում են ըստ գոյականի և բայի լրացումների՝ տարբերակելով *բազմիմաստ ածականների և բազմիմաստ մակբայների ուսումնասիրման խնդիրները:* Այս ենթագլուխներում կիրառվում են նոր՝ *Քեյս-ստադիի մեթոդը* (որակական ածականների ուսուցման դեպքում) և *ԽԻԿ համակարգը* (հարաբերական ածականների ուսուցման դեպքում): Բազմիմաստ մակբայները մատուցվում են *վերլուծական-համադրական մեթոդի* օգնությամբ, որի միջոցով կարելի է կատարել ընդհանրապես հատկանշային բազմիմաստ բառերի ուսուցումը:

Ատենախոս Գ.Ավետիսյանն իր հետազոտական աշխատանքի արդյունքներն

ամփոփել է ատենախոսության վերջին ենթագլխում, որտեղ համապատասխան տրամագրերի և հարցաթերթիկների միջոցով ներկայացնում է *բազմիմաստ բառերի ուսումնասիրման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկումը:*

Փորձարարական աշխատանքների արդյունքների վիճակագրական վերլուծությունն առավելի քան համազիչ է դարձնում ատենախոսի կատարած աշխատանքի և կիրառած մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Գ.Ավետիսյանի ատենախոսությունն ունի տեսական և գործնականի կարևոր նշանակություն: Տեսականորեն այն կարող է նպաստել իմաստաբանության միկրոթեմաների տրոհման սկզբունքների որոշարկմանն ու դրանց ամբողջացմանը, գործնականորեն կարող է օգնել իմաստաբանության ուսուցման մեթոդական համակարգի լրամշակմանն ու մեթոդական ձեռնարկներ կազմելու աշխատանքներին:

Հրապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսության վերաբերյալ ունենք որոշ նկատառումներ, որոնք, կարծում ենք, կարող են նպաստել աշխատանքի հետագա բարելավմանն ու լրամշակմանը՝ հրատարակության պատրաստելիս:

1. Հանրակրթական դպրոցի 5-9-րդ դասարանի աշակերտությանն ու մանկավարժներին հասցեագրված սույն հետազոտական աշխատանքը, որոշ դեպքերում, հարցադրումների ավելի լայն շրջանանակ է ներառում, քան նախատեսվում է դպրոցական ծրագրով և առարկայական չափորոշիչներով: Նման դեպքերում, ինչպիսին է, օրինակ, *խոսքիմասային տարարժեքություն ունեցող գոյականների ձևաիմաստային խմբերը և նրանց ուսումնասիրումը,* կարելի է հղում տալ առ այն, որ մեթոդական որոշակի պահանջներ կարելի է կիրառել ավագ դպրոցում և բուհական համակարգի համապատասխան դասընթացներում (2.3.):

2. Ատենախոսը բայական բազմիմաստ բառերի ուսուցման հիմնահարցերից է համարում բայիմաստի էությունից բխող *սեռի և սեռային զուգորդումների, կրկնասեռության, անցողական և անանցողական բայերի* ուսումնասիրությունը (3.3.):

Կարծում ենք՝ բայական այս հատկանիշների ուսումնասիրությունն անհրաժեշտ է խնդրո առարկայի ուսուցման շրջանակներում, սակայն պետք է խուսափել քերականական եզրույթների այսօրինակ կուտակումներից:

3. Աշխատանքի զգալի ծավալը (շուրջ 170 համակարգչային էջ) թույլ է տալիս, որ որոշ մեթոդական պահանջներ և տրամագրեր տեղափոխվեն *հավելված* բաժին, այնինչ ատենախոսությունն այդպիսի բաժին չունի:

Իբրև ամփոփում՝ կարող ենք ասել, որ մեր դիտողությունները կրում են մասնակի բնույթ և չեն ստվերում սույն ատենախոսության արժանիքները:

Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, մատչելի լեզվով. հարցադրումներն աչքի են ընկնում գիտամեթոդական ուղղվածությամբ, դրանք վերլուծելու տեսական և մեթոդական պատրաստվածությամբ: Ատենախոսը լեզվական նյութերին վերաբերող օրինակները քաղել է ժամանակակից հայ գրականությունից՝ միջառարկայական կապեր ապահովելով բանասիրական բնույթի առարկաների միջև:

Գ.Հ. Ավետիսյանի «Բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան հիմնական դպրոցում» թեմայով հետազոտությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, համապատասխանում է ԺԳ.00.02. թվանիշին՝ «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ, ուստի առաջարկում ենք Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ գործող 020 մասնագիտական խորհրդին՝ նրա հեղինակին շնորհելու մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բան. գիտ. թեկնածու, դոցենտ՝ (Հ.Վ.Սուքիասյան)
02.12.2020.

Դոց. Հ.Վ.Սուքիասյանի ստորագրությունը հաստատում եմ:
Երևանի Մխ. Հերացու անվ. պետական
բժշկական համալսարանի գիտքարտուղար, պրոֆեսոր՝ (Տ.Գ. Ավագյան)